

*ժուռնալիստիկա. տեսության եւ պատմության հարցեր,  
պրակ Ժ, Երևանի համալսարանի հրատարակչություն,  
2009թ., 63-68 էջեր*

*Անահիտ Մենենձյան*

## **Պաշտպանված տեղեկատվական միջավայր.**

### **ՀՀ տեղեկատվական անվտանգության հիմնական խնդիրները**

Համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ իշխող տրամադրությունն այսօր ուղղորդում է համամարդկային գիտակցությունն ու աշխարհաքաղաքական գործընթացները: Կախված այդ տարածությունում զբաղեցրած տեղից՝ որոշվում է պետության դիրքն աշխարհում և տարաբնույթ գործընթացներում:

Առավել նպաստավոր դիրք գրավելու համար անհրաժեշտ է նախ հստակեցնել պետության համար առավել կարևոր, կենսագործունեության հետ անմիջականորեն առնչվող տեղեկատվական հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության դեպքում դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի.

1. հայ-թուրքական,
2. հայ-ադրբեջանական,
3. Հայաստան-գերտերություններ տեղեկատվական հարաբերություններ:

Հայ-թուրքական տեղեկատվական հարաբերությունները հիմնականում առնչվում են 1915 թ. իրադարձությունների տարակերպ մեկնաբանություններին: Թուրքական պետությունը, օգտագործելով իր պետական և մասնավոր տեղեկատվական հնարավորությունները, հովանավորելով օտարերկրյա կազմակերպությունների անունից ներկայացող մի շարք կայքեր, տարբեր երկրների կրթական համակարգերում ապահովելով ներկայություն, հաճախ հետազոտական և ուսումնական աշխատանքների կազմակերպման քողի տակ լայնորեն իրականացնում է թուրքերենի, թուրքական մշակույթի, պատմության և դրանց թուրքական մեկնաբանության քարոզչություն: 1915 թ. հայերի համատարած տեղահանությունը թուրքական քարոզչական ապարատը կապում է այդ ժամանակահատվածում երկրում տիրող պատերազմական իրավիճակի հետ՝ մոռացության մատնելով այն փաստը, որ պատերազմական գործողությունները Թուրքիայում սկսվել էին միայն ապրիլ ամսին, մինչդեռ հայերի հանդեպ բռնարարքներ իրագործվում էին դեռևս տարեսկզբից:

Հայ-ադրբեջանական տեղեկատվական հարաբերությունները առավելապես ձևավորվում են Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ: Խնդիրը պատճառ է դարձել ադրբեջանական տարակերպ դրսևորված տեղեկատվական գրոհների, հայկական կայքէջերի վրա պարբերական հարձակումների համար: Ադրբեջանական կողմը աշխատանքներ է տանում ոչ միայն խնդրի էությունը խեղաթյուրված ներկայացնելու, այլև Հայաստանի վարկը նսեմացնելու, վերջինիս ագրեսոր ճանաչել տալու ուղղությամբ: Այս հարձակումների ազդեցությունը մեր պետությունը զգում է կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառներում:

Ըստ մեր պայմանական բաժանման՝ տեղեկատվական հարաբերությունների վերջին՝ երրորդ խումբը ներառում է Հայաստանի առնչությունները գերտերությունների հետ: Վերջիններս վաղուց արդեն լրջորեն զբաղվում են համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ գերիշխող դառնալու ուղղությամբ: Նրանք տեղեկատվությունն օգտագործում են համաշխարհային հանրության գիտակցության վրա ազդելու, այս կերպ աշխարհաքաղաքական, դիվանագիտական առավելությունների հասնելու համար: Նպատակի իրականացման ճանապարհին ձեռնարկվում են կոնկրետ քայլեր. ստեղծվում են տեղեկատվական ռազմավարության, համաշխարհային տեղեկատվական-հոգեբանական միջավայրի վրա ներգործության կենտրոններ, քննարկվում են պատերազմական հակամարտություններում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները, մշակվում տեղեկատվական պատերազմներ վարելու, մարդկային գիտակցության հանդեպ տեղեկատվության առավել նպատակային օգտագործման հոգեբանական միջոցներ: Այսօր տեղեկատվական զենքի (թե՛ հարձակողական և թե՛ պաշտպանողական) մշակում է իրականացնում աշխարհի մոտ 120 երկիր: Պատահական չէ, որ որոշ առաջավոր երկրների բյուջեներում տեղեկատվական անվտանգության համար նախատեսված ծախսերը տեղ են գտնում զանգվածային ոչնչացման զենքերի կիրառումից պաշտպանվելու համար նախատեսված ծախսերի հետ միևնույն փաթեթում<sup>1</sup>: Հայաստանի նման փոքր պետությունն, իհարկե, անմիջապես ենթարկվեց այս գրոհների ազդեցությանը: Այսօր ՀՀ պետական բուհեր տարեկան ավարտում են 5 անգամ ավելի օտար լեզուների, քան հայոց լեզվի մասնագետներ: Դիմորդների թվերի համեմատությունը շատ ավելի անմխիթարական է: Մեզանում արմատացած է իդեալական Արևմուտքի կերպարը, լայնորեն քարոզվում են արևմտյան ապրելակերպն ու մտածելակերպը. ցանկացած բնագավառում արված քայլերի իրավացիությունն ապացուցելու համար ներկայացվում են դրանց առնչություններն ու զուգահեռները արևմտյան համապատասխան համակարգի հետ, ինչն ինքնին վերածվում է արևմտյան

<sup>1</sup> Поляков Ю.А., Информационная безопасность и средства массовой информации, М., 2004, с. 3-14.

արժեքների գովազդի, ենթագիտակցության մեջ պատկերացում է ձևավորում դրանց միանշանակորեն ճշմարտացի լինելու մասին, որոշակի անվստահություն է առաջացնում սեփական մեթոդների, հայկական գիտական ներուժի հանդեպ: Նաև այս գործոններն են, թերևս, պայմանավորում մեր երկրում առկա զանգվածային արտագաղթն ու լայն տարածում ստացող արևմտամետ մտածողությունը:

Տեղեկատվական սպառնալիքների հիմնական ուղղությունները հստակեցնելուց հետո, փորձենք սահմանել դրանցից պաշտպանվելու մեխանիզմները:

Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական տեղեկատվական հարաբերությունները, չնայած որոշ տարբերությունների, ենթադրում են պաշտպանության գրեթե միանման մեխանիզմներ: Երկու դեպքում էլ խնդիր ունենք աշխարհին ներկայացնելու պատմական իրադարձությունների իրական պատկերը, տանելու մի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, մյուս կողմից Արցախի հողերի միանշանակ հայկական լինելուն ուղղված քարոզչական աշխատանքներ: Այս ուղղություններով քայլեր մեզանում, իհարկե, իրականացվում են, բայց դրանք չեն կրում համակարգված բնույթ, հանդես չեն գալիս որպես որոշակիորեն ուղղորդված տեղեկատվական քաղաքականության մաս: Օրինակ՝ մեր անելիքները կարող են առավել նպատակային դառնալ, եթե փորձենք ավելի շատ օգտագործել Սփյուռքի ներուժը: Ընդ որում, ճիշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր երկրում Սփյուռքի յուրահատկությունները՝ մտածելակերպը, նիստուկացը, տվյալ երկրում հայտնվելու կամ հայրենիքը լքելու հանգամանքները<sup>2</sup>:

Օրինակ՝ Ֆրանսահայ սփյուռքը հիմնականում ձևավորվել է ցեղասպանություն ապրած հայերից, ովքեր հիշում են Եղեռնը, հակված են պայքարելու ցեղասպանության ճանաչման համար, սակայն լավ չեն պատկերացնում դարաբաղյան հիմնահարցը: Այս ամենը ճշգրտությամբ իր արտահայտությունն է գտնում տեղեկատվական դաշտում. ֆրանսիական ամենահեղինակավոր թերթերը պարբերաբար անդրադառնում են հայոց ցեղասպանությանը՝ ֆրանսիացի ընթերցողին հետևողականորեն ծանոթացնելով 1915 թ. ջարդերի մանրամասներին, ինչը և նպաստեց այս երկրում ցեղասպանության ճանաչմանը<sup>3</sup>: Արցախյան հիմնահարցը ևս արծարծվում է: Սակայն եթե հայոց ցեղասպանության խնդրում ֆրանսիական տեղեկատվական հանրությունը հստակ կողմնորոշում ունի, ապա արցախյան խնդիրը քննելիս մոտեցումն ակնհայտ չէ. դարաբաղյան շարժման

<sup>2</sup> Կարծում ենք՝ սա բավականին իրատեսական է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ այս ուղղությամբ աշխատելու նախադրյալներն արդեն կան. նկատի ունենք Սփյուռքի նախարարության գոյությունը:

<sup>3</sup> Ըստ Լուիզ Հարիս Ֆրանս ինստիտուտի կողմից 18 տարեկանից բարձր 1000 մարդու միջև իրականացված հարցման՝ ֆրանսիացիների 69%-ը տեղյակ է 1915 թվի դեպքերից, և ընդամենը 31%-ը գաղափար չունի այդ մասին: Կարծում ենք՝ սա բավական բարձր ցուցանիշ է եվրոպական հզոր տերության համար, և այն ձևավորելու խնդրում ֆրանսիական լրատվամիջոցների դերը մեծ է եղել:

մանրամասները ներկայացվում են տարբեր, երբեմն ծայրահեղ տեսակետներով: Ասվածի վկայությունն է նաև հետևյալ փաստը. եթե ցեղասպանությանը վերաբերող հողվածները հիմնականում հեղինակային նյութեր են, ֆրասիական պարբերականների շատ լրագրողներ ծանոթ են խնդիրն և լուսաբանում են այն, ապա դարաբաղյան խնդիրը ներկայացվում է հիմնականում լրատվական գործակալություններից վերցված նյութերով: Շատ քիչ լրագրողներ են գրում այս թեմայով: Պատճառն ակնհայտ է. դարաբաղյան հիմնահարցը ավելի քիչ է ուսումնասիրված:

Միացյալ Նահանգներում պատկերն այլ է. այս երկրի սփյուռքը 1980-90-ական թվականներին զգալիորեն համալրվեց «մութ ու ցուրտ» Հայաստանից գաղթած հայերով: Բնական է, որ վերջիններիս ներդրումը ցեղասպանության քարոզչության մեջ համեմատաբար այնքան էլ մեծ չէ, բայց նրանք ավելի լավ են պատկերացնում դարաբաղյան հակամարտությունը:

Միայն երկրի տեղեկատվական միջավայրի, մեր խնդիրների հանդեպ դրա ձևավորած մտայնության ուսումնասիրությունից հետո է հնարավոր հստակ ուղղորդված տեղեկատվական ներգործություն ունենալ տվյալ երկրի բնակչության վրա: Խելամիտ տեղեկատվական գործողությունների շնորհիվ կարելի է հասնել հայ ժողովրդի համար կարևոր խնդիրների հանդեպ նպաստավոր վերաբերմունքի ձևավորմանը: Ընդ որում, այդ տեղեկատվական գործողությունները ցանկալի է, որ դրսևորվեն տարբեր ուղղություններով. խնդիրների վերաբերյալ օտարալեզու գրքերի հրատարակում, տեղեկությունների մատչելիության և օպերատիվության ապահովում, նոր էլեկտրոնային կայքերի ստեղծում, հների բովանդակության համալրում համապատասխան տեղեկատվությամբ, արտասահմանյան լրատվամիջոցների օգտագործում և այլն:

Այս ամենը կօգնի նաև հստակ, որոշակի տեղեկատվություն տրամադրել հայ և միջազգային հանրությանը ՀՀ պետական քաղաքականության, հայ և միջազգային կյանքի կարևոր, նշանակալի իրադարձությունների վերաբերյալ մեր պետության պաշտոնական դիրքորոշման մասին: Սա հրաշալի միջոց է կանխելու ՀՀ-ի անունից մեր դիրքորոշումներն ու մոտեցումները խեղաթյուրող տեղեկատվության տարածմանը, միևնույն ժամանակ հակազդելու Հայաստանին առնչվող ոչ հավաստի կամ մանիպուլյատիվ տեղեկատվությանը:

Հայաստան - գերտերություններ վերջին խմբի տեղեկատվական հարաբերությունների համար պաշտպանական մեխանիզմները փոքր-ինչ այլ են: Այս դեպքում խնդիր ունենք կանոնակարգելու ներազգային տեղեկատվական դաշտը: Հայկական լրատվամիջոցներում հաճախ հանդիպում են հակահայկական միտում ունեցող հողվածներ, երբեմն վարկաբեկվում են մեր ազգային խառնվածքի դրական

կողմերը, քննադատության է ենթարկվում հայկական ավանդական մտածելակերպը, համակարգված աշխատանք չի տարվում արտերկրում Հայաստան երկրի անունն ու վարկը բարձրացնելու ուղղությամբ: Խնդիրը լուծելի է միայն ակտիվ քարոզչական աշխատանքների միջոցով: Ընդ որում, հասարակության մեջ հայրենասիրական զգացումներ արմատավորելու, տնտեսական, մշակութային ու գիտական հայրենական ներուժի հանդեպ վստահություն ձևավորելու գործը միայն տեղեկատվական համակարգինը չէ, դրան պետք է մասնակցի նաև կրթական ոլորտը:

Այս առումով հատկապես կարևոր է համահայկական տեղեկատվական միջավայրի ձևավորման խնդիրը: Դա կարող է լինել մի տարածք, որը կմիավորի երևանում, աշխարհի տարբեր երկրներում, Հայաստանի հեռավոր շրջաններում ապրող հայերին: Այդ դաշտի ձևավորումը, սակայն, հնարավոր կլինի այն դեպքում, եթե մեծանա ուշադրությունը հասարակության ինֆորմատիզացման /հատկապես մարզերում/, ՀՀ հեռահաղորդակցական և կապի համակարգերի զարգացման հանդեպ:

Առաջին հայացքից տեղեկատվական միջավայրի պաշտպանությունը կարելի է կապել փակ ՁԼՄ համակարգի և վերահսկողության հետ: Այդպես չէ. փակ ՁԼՄ համակարգը ստիպում է հասարակությանը փնտրել այլընտրանքային տեղեկատվական աղբյուրներ, ինչը հեշտորեն կարելի է գտնել դրսում և Աստված մի արասցե՝ հակառակորդի տեղեկատվական դաշտում: Տեղեկատվական միջավայրը պաշտպանված է, եթե երկրի տեղեկատվական համակարգն ապահովում է ազատ միտք, կան հզոր և գիտակից ՁԼՄ, որոնք գիտեն ինչպես աշխատել:

Այսպիսով, քիչ թե շատ պաշտպանված տեղեկատվական միջավայր ձևավորելու համար հիմնականում անհրաժեշտ է՝

- պետական գերատեսչությունների աշխատանքի թափանցիկություն,
- բաց և ազատ, օբյեկտիվ ՁԼՄ համակարգ,
- հայրենական արտադրանքի, լեզվի, մշակույթի մշտական քարոզչություն,
- մեզ համար մեծ կարևորություն ունեցող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության օպերատիվ տրամադրում,
- արտերկրի ներուժը օբյեկտիվորեն գնահատելու ընդունակ մասնագիտացված լրագրողների պատրաստում: